Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ներքին Հանդի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

«Ռուսաց լեզու» (6 դասաժամ) «Ֆիզիկա» (4 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (8 դասաժամ), «Հայոց լեզու, գրականություն, մայրենի» (17 դասաժամ),«Երգ» (3 դասաժամ), «Կերպարվեստ» (4 դասաժամ), «Իմ հայրենիքը և աշխարհը» (3 դասաժամ), «ԹԳՀԳ» (3 դասաժամ), «Բնություն» (3 դասաժամ), «Տեխնոլոգիա» (2 դասաժամ), «Անգլերեն» (7 դասաժամ), «Կենսաբանություն» (4 դասաժամ), «Քիմիա» (4 դասաժամ), «Նզպ» (1 դասաժամ), «Հայաստաի պատմություն» (6 դասաժամ), «Համ. պատմություն» (4 դասաժամ), «Հասարակագիտություն» (2 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. Հոկտեմբերի 20-ից մինչև Հոկտեմբերի 31-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. Նոյեմբերի 03-ին՝ ժամը 14:00-ին, «Ներքին Հանդի հիմնական դպրոց»** ՊՈԱԿ-ում, հասցե՝ Սյունիքի մարզ, Կապան համայնք,Ներքին Հանդի բնակավայր, 10/1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 64-11-53 հեռախոսահամարով:

AnyScanner